Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1087[6]-26.05.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 128-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «քսանհինգապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով.

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Ուժը կորցրած կամ չգործող վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաեւ օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող (ՄԱԿ-ի 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայի պահանջները չբավարարող) վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:».

3) 7-րդ մասի 2-րդ կետում «կարգի» բառից հետո լրացնել «(ենթակարգի)» բառը.

4) 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է առանց վարորդական վկայականի, եթե նա ունի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, սակայն վարելու ընթացքում իր մոտ չունի վարորդական վկայական (ժամանակավոր վարորդական վկայական) կամ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածով սահմանված կարգով տրված տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն եւ իրավախախտումը հայտնաբերած պաշտոնատար անձը տեխնիկական պատճառներով հնարավորություն չունի էլեկտրոնային համակարգի միջոցով ստուգել գործող վարորդական վկայականի առկայությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) լրացնել 17.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.

«17.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:».

2) լրացնել 18.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքի մեջ ներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 191.1-ին հոդվածով.

«*Հոդված 191.1. Տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձի կողմից արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ կրելը*

1. Տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձի կողմից արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ կրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով՝ արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաները, սարքերը կամ գործիքները վերցնելով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 258-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված հոդվածներով սահմանված իրավախախտումներ կատարելու դեպքում խախտողը դրա համար լիազորված անձի կողմից կարող է բերվել ոստիկանություն, եթե նա չունի ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ենթադրյալ վարչական իրավախախտում կատարած անձը հրաժարվում է շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներով անցնել նույնականացում կամ նշված միջոցներով նույնականացում իրականացնել հնարավոր չէ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 264-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «123-րդ, 123.1-ին, 123.3-րդ հոդվածներով, 123.4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.5-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ եւ 129.2-րդ» բառերը փոխարինել «224-րդ հոդվածով նախատեսված՝ ճանապարհային երթեւեկության կանոնների (ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումների համար պատասխանատվություն սահմանող» բառերով.

2) 4-րդ մասում «191,» թվից հետո լրացնել «191.1,» թիվը, իսկ «զենքը, ինչպես նաեւ» բառերը փոխարինել «արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաները, սարքերը կամ գործիքները, ինչպես նաեւ զենքը,» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 128-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «քսանհինգապատիկի» բառը փոխարինել «հիսնապատիկի» բառով.

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Ուժը կորցրած կամ չգործող վարորդական վկայականով կամ ուժը կորցրած այլ փաստաթղթերով տրանսպորտային միջոցներ վարելը, ինչպես նաեւ օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում չգործող (ՄԱԿ-ի 1968 թվականի «Ճանապարհային երթեւեկության մասին» կոնվենցիայի պահանջները չբավարարող) վարորդական վկայականով տրանսպորտային միջոց վարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:».

3) 7-րդ մասի 2-րդ կետում «կարգի» բառից հետո լրացնել «(ենթակարգի)» բառը.

4) 8-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8. Սույն օրենսգրքի իմաստով անձը համարվում է առանց վարորդական վկայականի, եթե նա ունի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք, սակայն վարելու ընթացքում իր մոտ չունի վարորդական վկայական (ժամանակավոր վարորդական վկայական) կամ սույն օրենսգրքի 264-րդ հոդվածով սահմանված կարգով տրված տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն եւ իրավախախտումը հայտնաբերած պաշտոնատար անձը տեխնիկական պատճառներով հնարավորություն չունի էլեկտրոնային համակարգի միջոցով ստուգել գործող վարորդական վկայականի առկայությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 131-րդ հոդվածի 3-րդ մասում «հնգապատիկի» բառը փոխարինել «տասնապատիկի» բառով:

~~***Հոդված 3.***~~ ~~**Օրենսգրքի 158-րդ հոդվածի 17-րդ մասում «նյութեր,» բառից հետո լրացնել «արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ**

~~դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ,» բառերը, իսկ 18-րդ մասում «նյութերի,» բառից հետո լրացնել «արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների,» բառերը:~~

Հոդված 3. **Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝**

3) **լրացնել 17.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ.**

«17.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:».

4) **լրացնել 18.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.**
«18.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքի մեջ ներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 191.1-ին հոդվածով.

«Հոդված 191.1. Տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձի կողմից արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ կրելը

1. Տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձի կողմից արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ կրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ~~քսանապատիկի~~ **քառասնապատիկի** չափով՝ արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաները, սարքերը կամ գործիքները վերցնելով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 258-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածով նախատեսված հոդվածներով սահմանված իրավախախտումներ կատարելու դեպքում խախտողը դրա համար լիազորված անձի կողմից կարող է բերվել ոստիկանություն, եթե նա չունի ինքնությունը հաստատող փաստաթղթեր, ենթադրյալ վարչական իրավախախտում կատարած անձը հրաժարվում է շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներով անցնել նույնականացում կամ նշված միջոցներով նույնականացում իրականացնել հնարավոր չէ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 264-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում «123-րդ, 123.1-ին, 123.3-րդ հոդվածներով, 123.4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.5-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ եւ 129.2-րդ» բառերը փոխարինել «224-րդ հոդվածով նախատեսված՝ ճանապարհային երթեւեկության կանոնների (ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) խախտումների համար պատասխանատվություն սահմանող» բառերով.

2) 4-րդ մասում «191,» թվից հետո լրացնել «191.1,» թիվը, իսկ «զենքը, ինչպես նաեւ» բառերը փոխարինել «արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաները, սարքերը կամ գործիքները, ինչպես նաեւ զենքը,» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087-26.05.2025-ՊԱ-011/1), «ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[1]-26.05.2025-ՊԱ-011/1), «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[2]-26.05.2025-ՊԱ-011/1), «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[3]-26.05.2025-ՊԱ-011/1), «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[4]-26.05.2025-ՊԱ-011/1), «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[5]-26.05.2025-ՊԱ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1087[6]-26.05.2025-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վահագն Ալեքսանյան**	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ	Հաշվի առնելով 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ վաճառելու, դրանց վաճառքի մեջ նշված անձանց ներգրավելու և տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձի կողմից այդ առարկաները, սարքերը կամ	**Ընդունվել է:** **:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			գործիքները կրելու հանրային վնասակարության բարձր աստիճանը՝ առաջարկում ենք նշված իրավախախտումների համար նախագծով սահմանված տուգանքի չափերը համապատասխանաբար բարձրացնել կրկնակի չափով: Ըստ այդմ, առաջարկում ենք՝ 1) նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«Հոդված 3.*** Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝ 5) լրացնել 17.1-ին մաս՝ հետեւյալ բովանդակությամբ. «17.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաներ, սարքեր կամ գործիքներ վաճառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն		

			աշխատավարձի հարյուրապատիկի չափով:». 6) լրացնել 18.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «18.1. 18 տարին չլրացած անձանց արտաքին տեսքով կամ կառուցվածքով սառը զենքին նմանվող եւ արտադրական, կենցաղային, տնտեսական, ուսումնական, մշակութային կամ դեկորատիվ նշանակություն ունեցող առարկաների, սարքերի կամ գործիքների վաճառքի մեջ ներգրավելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:»: 2) Միաժամանակ, առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածում «քսանապատիկի» բառը փոխարինել «քառասնապատիկի» բառով:		